

Պ-513-07.05.2014,02.09.2014-ԱՄ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բժշկական օգնություն և սպասարկում բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:».

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, իրավական վիճակից և սեփականության ձևից, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ:».

3) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ մասերով.

«5. Առողջապահության բնագավառ՝ ոլորտ, որտեղ իրականացվում է մարդու և հանրության առողջության պահպանման, ապահովման ու բարելավման ուղղված գործունեություն:

6. Բուժաշխատող՝ առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնող, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում և նախատեսված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ:

7. Առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն՝ բուժաշխատողի կողմից իր կրթությանը, որակավորմանը և մասնագիտական բնութագրին համապատասխան, իր իրավասության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին, չափորոշիչներին, կլինիկական ուղեցույցներին, պացիենտի վարման գործելակարգերին և իր աշխատանքային պարտականություններին համապատասխան աշխատանքների իրականացում:

8. Կլինիկական ուղեցույց՝ բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների կողմից մշակված և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված կոնկրետ խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակն է աջակցել բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ կայացնելուն:

9. Պացիենտի վարման գործելակարգ՝ բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությանը, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ:

10. Գործունեության ընթացակարգ՝ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը նկարագրող փաստաթուղթ:

11. Մասնագիտական բնութագիր՝ առողջապահության բնագավառի բժշկական և ոչ բժշկական, ինչպես նաև նեղ մասնագիտություններից յուրաքանչյուրի ընդհանուր նկարագիրը, մասնագետի տեսական և գործնական գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների, ինչպես նաև մասնագիտական իրավունքների, պարտականությունների և գործառույթների ծավալը սահմանող փաստաթուղթ:

12. Բժշկական փաստաթուղթ՝ բուժաշխատողի կողմից վարվող (լրացվող) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ձևի հաշվետվական կամ հաշվառման թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ, որը ներառում է պացիենտի առողջության, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, դրան համաձայնություն տալու կամ դրանից հրաժարվելու, ինչպես նաև պացիենտի առողջության պահպանման կամ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ անհրաժեշտ բժշկական և ոչ բժշկական բնույթի տվյալներ:

13. Շարունակական մասնագիտական զարգացում՝ առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման անընդհատությունն ապահովող գործընթաց:

14. Շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր (այսուհետ՝ ՇՄԶ հավաստագիր)՝ բուժաշխատողի ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ հավաքելու և վերջին հինգ տարիների ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում:

15. Վերապահումով հավաստագիր՝ բուժաշխատողի ոչ ինքնուրույն, հսկողության ներքո մասնագիտական գործունեություն իրականացնելու թույլտվություն, որը տրվում է չբավարարող աշխատանքային մասնագիտական ստաժը լրացնելու կամ չբավարարող շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտները լրացնելու կամ համապատասխան հաստատությունը ավարտելուց հետո սահմանված ժամանակահատվածում մասնագիտական գործունեություն չիրականացնելու դեպքում աշխատանքային ստաժը լրացնելու պայմանով:

16. Հավաստագրում՝ շարունակական մասնագիտական զարգացման արդյունքների գնահատման և ՇՄԶ հավաստագրի տրամադրման (մերժում) ընթացակարգ:

17. Աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործում՝ բուժաշխատողի կողմից այլ բժշկական կազմակերպությունում կամ բուժաշխատողի աշխատանքային վայր հանդիսացող բժշկական կազմակերպությունում այլ բժշկական կազմակերպություններից

հրավիրված մասնագետների մասնակցությամբ նոր գործնական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթաց:

18.Պացիենտ՝ բժշկական օգնության և սպասարկման սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական անձ:»:

Հոդված 2. Օրենքում «հիվանդներ», «հիվանդ» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «պացիենտ» բառով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ մասի՝

ա. «ա» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա) միավորվել մասնագիտական միություններում և դրանց միջոցով մասնակցել առողջապահական պետական նպատակային և ապահովագրական ծրագրերի մշակմանը, բժշկական օգնության և սպասարկման լիցենզավորմանը, բժշկական շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը, իրենց իրավունքների պաշտպանությանը և միության կանոնադրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացմանը.».

բ. «բ» կետում «պաշտպանել իրենց մասնագիտական պատիվը և արժանապատվությունը» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով պաշտպանել իրենց համբավը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «ա» կետում «անհետաձգելի» բառից հետո հանել ստորակետը.

2) «գ» կետում «տեղյակ պահել» բառերը փոխարինել «ապահովել» բառով, «մասին» բառից հետո լրացնել «տեղեկատվության տրամադրումը» բառերը.

3) «է» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«է) ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունքը պացիենտների նկատմամբ».

4) «է» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ը», «թ», «ժ» և «ի» կետերով.

«ը) ունենալ պաշտոնական ինտերնետային կայք, որը առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, գնացուցակի, բուժանձնակազմի վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն մասնագիտական ծառայություններ մատուցողների հետ.

թ) ՇՄՁ հավաստագիր չունեցող անձին, բացառությամբ առաջին անգամ մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և մասնագիտացում ունեցող անձին, չթույլատրել իրականացնել իր մասնագիտական գործունեությամբ պայմանավորված աշխատանքային պարտականությունները, իսկ վերապահումով հավաստագիր ունեցող անձին չթույլատրել ինքնուրույնաբար իրականացնել իր մասնագիտական գործունեությամբ պայմանավորված աշխատանքային պարտականությունները.

ժ) ապահովել գործունեության ընթացակարգով, պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջների կատարման աշխատանքները.

ի) Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան հաստատել գործունեության ընթացակարգը»:

Հոդված 5. Օրենքը լրացնել նոր 3.1-րդ և 3.2-րդ գլուխներով.

**«ԳԼՈՒԽ 3.1 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 19.1. Բուժաշխատողներին ներկայացվող պահանջները

1. Ըստ կրթության մակարդակի և առողջապահության բնագավառում իրականացվող գործունեության, բուժաշխատողները բաժանվում են խմբերի և համապատասխանաբար կոչվում են ավագ, միջին, կրտսեր բուժաշխատողներ:

2. Ավագ բուժաշխատողը առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձն է, ով ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու որակավորում, մասնագիտացում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄՁ հավաստագրեր:

3. Միջին բուժաշխատողը առողջապահության բնագավառում որոշակի մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձն է, ով ունի միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ու որակավորում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄՁ հավաստագրեր:

4. Կրտսեր բուժաշխատողը առողջապահության բնագավառում ոչ մասնագիտական՝ օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձն է, ում, կախված բժշկական օգնության և սպասարկման տեսակից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից կարող են ներկայացվել որոշակի գիտելիքների և հմտությունների տիրապետելու պահանջներ: Կրտսեր բուժաշխատողները շարունակական մասնագիտական զարգացման գործընթաց չեն անցնում և ՇՄՁ հավաստագիր չեն ստանում:

5. Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության, բժշկական և ոչ բժշկական մասնագիտությունների, ինչպես նաև նեղ մասնագիտությունների ցանկերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից: Սույն օրենքի իմաստով օտարերկրացի բուժաշխատողի մասնագիտական կարճաժամկետ գործունեություն է համարվում մուտքի վիզայով կամ առանց մուտքի վիզայի Հայաստանի Հանրապետությունում օրացուցային 180 օր գտնվելու ընթացքում բժշկական մասնագիտական գործունեության իրականացումը:

7. Այլ պետություններում բժշկական կրթություն ստացած անձինք (ներառյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները) Հայաստանի Հանրապետությունում բժշկական մասնագիտական գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա բժշկական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կրթության փաստը հավաստող

փաստաթղթերի ճանաչման և սույն օրենքով սահմանված կարգով մասնագիտական գործունեության և ՇՄՁ հավաստագրերի առկայության դեպքում:

8. Համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում ունեցող անձինք առողջապահության բնագավառում առաջին անգամ մասնագիտական գործունեություն կարող են իրականացնել համապատասխան մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կողմից տրված ավարտական փաստաթղթի հիման վրա սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունքը գրանցելու և հավաստագիր ստանալու դեպքում:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ մասնագիտական գործունեության հավաստագրի հիման վրա, անձը ինքնուրույն մասնագիտական գործունեություն կարող է իրականացնել, եթե մասնագիտական գործունեությունը սկսել է ոչ ուշ քան համապատասխան հաստատությունը ավարտելուց հետո երկու տարվա ընթացքում:

Եթե սույն մասով նախատեսված ժամանակահատվածում անձը չի իրականացնում մասնագիտական գործունեություն, ապա նա մասնագիտական գործունեությունը կարող է իրականացնել ստաժը լրացնելու պայմանով տրված վերապահումով հավաստագրի հիման վրա՝ համապատասխան մասնագետի հսկողության ներքո:

Հոդված 19.2. Բուժաշխատողների իրավունքները

1. Բուժաշխատողներն իրավունք ունեն՝

1) ավագ և միջին բուժաշխատողները՝ օրենքով սահմանված կարգով, իրենց կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան՝ իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնել առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն, իսկ կրտսեր բուժաշխատողներն իրենց իրավասությունների շրջանակում ոչ մասնագիտական՝ օժանդակող գործունեություն:

2) ապահովագրել իրենց գործունեության հետ կապված քաղաքացիական պատասխանատվության ռիսկը:

3) ելնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի իրավիճակից կայացնել ապացուցողական բժշկությամբ հիմնավորված որոշումներ՝ լրացուցիչ միջամտություններ կատարելու համար, որոնք նախատեսված չեն համապատասխան կլինիկական ուղեցույցներով:

4) օրենքով սահմանված կարգով մասնակցել շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին:

5) օրենքով սահմանված կարգով պաշտպանել իրենց մասնագիտական համբավը, պատիվը և արժանապատվությունը:

6) օրենքով սահմանված կարգով ստեղծել միավորումներ կամ անդամակցել դրանց:

7) օգտվել օրենքով սահմանված այլ իրավունքներից:

Հոդված 19.3. Բուժաշխատողների պարտականությունները

1. Բուժաշխատողները պարտավոր են՝

1) առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել պացիենտի շահերով:

2) յուրաքանչյուր մարդու ցուցաբերել անհետաձգելի առաջին բժշկական օգնություն:

3) հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել պացիենտի նկատմամբ.

4) պացիենտին և (կամ) նրա օրինական ներկայացուցչին տեղյակ պահել իր առողջությանը վերաբերող հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների ու բուժման արդյունքների մասին.

5) բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնելիս կիրառել Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև արձանագրել բժշկական միջամտությունները.

7) պահպանել բժշկական գաղտնիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) կատարելագործել իր մասնագիտական գիտելիքները և հմտությունները, մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխան մասնակցել շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին.

9) իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված մասնագիտական բնութագրին համապատասխան.

10) կատարել պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով կլինիկական ուղեցույցները: Պացիենտի վարման գործելակարգերը և կլինիկական ուղեցույցները հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից.

11) կատարել գործունեության ընթացակարգով սահմանված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում: Գործունեության ընթացակարգի օրինակելի ձևը, ներառյալ ընթացակարգում ներառվող պարտադիր պահանջները հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից.

12) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

ԳԼՈՒԽ 3.2 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հոդված 19.4. Շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման գործընթացը

1. Շարունակական մասնագիտական զարգացումն իրականացվում է այդ գործընթացի անընդհատության և բազմաձևության սկզբունքների համակցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացի անընդհատությունն ապահովվում է յուրաքանչյուր հնգամյա շրջափուլով՝ այդ տարիների ընթացքում իրականացված մասնագիտական գործունեության, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների գնահատման հիման վրա: Շարունակական մասնագիտական զարգացման, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների համար շնորհվում են շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ՝ (այսուհետ՝ ՇՄԶ կրեդիտներ):

3. Շարունակական մասնագիտական զարգացման բազմաձևությունն ապահովելու համար շարունակական մասնագիտական զարգացումը ներառում է հետևյալ տեսակները՝

1) տեսական գիտելիքների զարգացում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, սիմպոզիումներին, գիտական, գիտագործնական գիտաժողովներին և համագումարներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

2) գործնական հմտությունների զարգացում՝ աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործման, գիտագործնական միջոցառումներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

3) ինքնակրթություն և ինքնազարգացում՝ հեռավար կամ առցանց դասընթացների մասնակցության և (կամ) իրականացման, կամ գիտական աշխատանքների, աշխատությունների հրատարակման և (կամ) գործնական ուսումնասիրությունների արդյունքների ներկայացման միջոցով:

4. Շարունակական մասնագիտական զարգացման գործունեությունը և շնորհվող ՇՄՁ կրեդիտները յուրաքանչյուր հնգամյա փուլում պետք է լրացվեն սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործունեության երեք տեսակներից և կազմեն՝

1) ավագ բուժաշխատողների համար՝ առնվազն 220 ՇՄՁ կրեդիտ, բացառությամբ դեղագետների և ոչ բժշկական այլ մասնագիտություններով որակավորված մասնագետների, որոնց համար սահմանվում է առնվազն 160 ՇՄՁ կրեդիտ.

2) միջին բուժաշխատողների համար՝ առնվազն 140 ՇՄՁ կրեդիտ, բացառությամբ դեղագործների և ոչ բժշկական այլ մասնագիտություններով որակավորված մասնագետների, որոնց համար սահմանվում է առնվազն 100 ՇՄՁ կրեդիտ:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում թվարկած շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների համար կրեդիտներ կարող են տրամադրվել մասնակցության և (կամ) իրականացման համար:

6. Շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող ՇՄՁ կրեդիտների քանակը և դրանց շնորհման կարգը սահմանում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված շարունակական մասնագիտական զարգացման տեսակները, առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով, կարող են իրականացնել հետևյալ տեղական, օտարերկրյա և (կամ) միջազգային կազմակերպությունների կողմից՝

1) օրենքով սահմանված կարգով բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ.

2) բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպություններ.

3) առողջապահական կամ բժշկական կազմակերպություններ.

4) առողջապահության բնագավառում գործունեություն ծավալող այլ կազմակերպություններ:

8. Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում շարունակական մասնագիտական զարգացման առանձին տեսակները կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 19.5. Հավաստագրմանը ներկայացվող հիմնական պահանջները

1. Շարունակական մասնագիտական զարգացման գնահատումն իրականացվում է հավաստագրման միջոցով:

2. ՇՄՁ հավաստագիրը տրվում է հինգ տարի ժամկետով: ՇՄՁ հավաստագրի ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ բուժաշխատողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է հաջորդ հինգ տարիների համար ՇՄՁ հավաստագիր ստանալու նպատակով:

3. ՇՄՁ հավաստագիրը տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների բավարարման և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու դեպքում:

4. ՇՄՁ հավաստագիրը (բացառությամբ վերապահումով հավաստագրի) տրվում է, եթե բուժաշխատողը լրացրել է սույն օրենքով սահմանված ՇՄՁ կրեդիտների նվազագույն քանակը և վերջին հինգ տարում ունի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

5. Վերջին հինգ տարում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ չունենալու դեպքում տրվում է վերապահումով հավաստագիր՝ ոչ ինքնուրույն, հսկողության ներքո իրականացվող՝ չբավարարող աշխատանքային մասնագիտական ստաժը լրացնելու պայմանով, որի փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում տրվում է ՇՄՁ հավաստագիր:

6. Վերջին հինգ տարում ՇՄՁ կրեդիտների նվազագույն քանակը չհավաքելու դեպքում տրվում է վերապահումով հավաստագիր՝ չբավարարող ՇՄՁ կրեդիտների քանակը լրացնելու պայմանով:

7. ՇՄՁ հավաստագիր չի տրվում եթե բուժաշխատողը չի ապահովել սույն հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված պահանջները:

8. ՇՄՁ հավաստագրի, այդ թվում՝ վերապահումով հավաստագրի մերժումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

9. Հավաստագրումը իրականացնում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ստեղծված մասնագիտական գործունեության հավաստագրման ազգային կենտրոնը (ՄԳՀԱԿ): Այդ նպատակով ՄԳՀԱԿ-ում լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով ստեղծվում են մասնագիտական հանձնաժողովներ՝ որոնց կազմում ընդգրկվում են բժշկական մասնագիտական հասարակական միավորումների, բժշկական ուսումնական հաստատությունների, բժշկական կազմակերպությունների և առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներ: Մասնագիտական հանձնաժողովների անհատական կազմը սահմանում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

10. ՄԳՀԱԿ-ը ՇՄՁ հավաստագրումը կազմակերպելու համար իրականացնում է՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեություն իրականացնող բուժաշխատողների գրանցումը

2) առաջին անգամ մասնագիտական գործունեությունը սկսող բուժաշխատողների գրանցումը և հավաստագրի տրամադրումը.

3) ՇՄՁ կրեդիտների հիման վրա սահմանված կարգով ՇՄՁ հավաստագրերի տրամադրումը.

4) ավագ և միջին բուժաշխատողների վերաբերյալ շտեմարանի վարումը, որտեղ առնվազն ներառվում են բուժաշխատողների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության, որակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության և ՇՄՁ հավաստագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

11. Հավաստագրման կազմակերպման և իրականացման կարգը, հավաստագրերի և վերապահումով հավաստագրի ձևերը և տրամադրման կարգը, շտեմարանի ձևավորման և վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 6. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ 4-րդ հոդվածի 4-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման և հավաստագրման 5 տարվա ժամանակացույց:

3. 2012 թվականից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընկած ժամանակահատվածը շարունակական մասնագիտական զարգացման սույն օրենքի 19.4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեսակներին մասնակցած բուժաշխատողներին կարող են շնորհվել կրեդիտներ՝ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
	Առաջարկության հեղինակ	Նախագծի փոփոխվող մաս	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	1-ին հոդվածի 3-րդ մասով լրացվող 9-րդ մասում հստակեցնել «նվազագույն աշխատանքային ստաժ» հասկացությունը	Առաջարկն ընդունված է: «նվազագույն աշխատանքային ստաժ» բառերը փոխարինվել է «առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերով: Այլ առաջարկների ընդունման հետ կապված 9-րդ մասը համարակալվել է որպես 14-րդ մաս:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	ա) 1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ կետերով.	Առաջարկն ընդունված է մասամբ: ա) 1-ին հոդվածի 3-րդ մասը լրացվել է «կլինիկական ուղեցույց», «պացիենտի վարման գործելակարգ», «գործունեության ընթացակարգ», «մասնագիտական բնութագիր», «բժշկական փաստաթղթեր» հասկացություններով և հետևաբար օրենքի նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ, որոնք բխում են վերոնշյալ հասկացություններից: 1-ի հոդվածի 3-րդ մասում լրացումները կատարվել են հետևյալ խմբագրությամբ`  «8. <b>Կլինիկական ուղեցույց` բժշկական մասնագիտական հասարակական
			«14. Կլինիկական ուղեցույց` ապացուցողական	

			բժշկության տվյալների վրա հիմնված և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված կոնկրետ խնդիր ունեցող պացիենտների կարիքները:	կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների կողմից մշակված և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված կոնկրետ խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակն է աջակցել բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ կայացնելուն: Առաջարկվող հասկացությունից հանվել է «ապացուցողական բժշկության տվյալների վրա հիմնված» բառակապակցությունը, քանի որ 19,2 հոդվածի 3-րդ կետով ամրագրվել է , որ «բուժաշխատողն իրավունք ունի ելնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի իրավիճակից կայացնել ապացուցողական բժշկությամբ հիմնավորված որոշումներ՝ լրացուցիչ միջամտություններ կատարելու համար, որոնք նախատեսված չեն համապատասխան կլինիկական ուղեցույցներով»: Հետևաբար, կլինիկական ուղեցույցներով նախատեսված չլինելու դեպքում, բուժաշխատողը իրավունք ունի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կայացնել որոշում, որոնք հիմնավորված են ապացուցողական բժշկությամբ:
--	--	--	---	---

			15. Հիվանդի վարման գործելակարգ՝ բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը ներկայացվող պարտադիր պահանջներ: 16. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչ՝ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման ծավալների, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման պահանջների և պայմանների ամբողջություն, որը ենթակա է կատարման կնքված պայմանագրի շրջանակներում: 17. Գործունեության ընթացակարգ՝ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը նկարագրող փաստաթուղթ:	«9.Պացիենտի վարման գործելակարգ՝ բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությամբ, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ:»: «Հիվանդի վարման գործելակարգ» հասկացությունը փոխարինվել է «պացիենտի վարման գործելակարգ» հասկացությամբ, քանի որ օրենքի ամբողջ տեքստում «հիվանդ» տերմինը փոխարինվել է «պացիենտ» տերմինով: Չի ընդունվել, քանի որ «Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչ» հասկացությունը հանդիսանում է առանձին կարգավորման առարկա, որի ամբողջական և լիարժեք կարգավորման համար անհրաժեշտություն կառաջանա նախագծերը լրացնել նոր հոդվածներով: «10.Գործունեության ընթացակարգ՝ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը նկարագրող փաստաթուղթ: «11. Մասնագիտական բնութագիր՝
--	--	--	--	--

			18. Մասնագիտական բնութագիր՝ առողջապահության բնագավառի բժշկական և ոչ բժշկական, ինչպես նաև բժշկական նեղ մասնագիտություններից յուրաքանչյուրի ընդհանուր նկարագիրը, մասնագետի տեսական և գործնական գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների, ինչպես նաև մասնագիտական իրավունքների, պարտականությունների և գործառույթների ծավալը սահմանող փաստաթուղթ: 19. Բժշկական փաստաթուղթ՝ բուժաշխատողի կողմից վարվող (լրացվող) և Հայաստանի Հնարապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ձևի հաշվետվական կամ հաշվառման թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ, որը ներառում է պացիենտի առողջության, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, դրան համաձայնություն տալու կամ դրանից հրաժարվելու, ինչպես նաև պացիենտի առողջության պահպանման կամ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ	առողջապահության բնագավառի բժշկական և ոչ բժշկական, ինչպես նաև նեղ մասնագիտություններից յուրաքանչյուրի ընդհանուր նկարագիրը, մասնագետի տեսական և գործնական գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների, ինչպես նաև մասնագիտական իրավունքների, պարտականությունների և գործառույթների ծավալը սահմանող փաստաթուղթ:»: «Մասնագիտական բնութագիր» հասկացության մեջ «բժշկական նեղ մասնագիտություններ» բառակապակցությունից հանվել է «բժշկական» բառը, քանի որ առողջապահության մեջ կան նեղ մասնագիտություններ, որոնք չեն մտնում բժշկական մասնագիտությունների մեջ, օրինակ՝ հոգեբան, լոգոպեդ: «12. Բժշկական փաստաթուղթ՝ բուժաշխատողի կողմից վարվող (լրացվող) և Հայաստանի Հնարապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ձևի հաշվետվական կամ հաշվառման թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ, որը ներառում է պացիենտի առողջության, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, դրան համաձայնություն տալու կամ դրանից հրաժարվելու, ինչպես նաև պացիենտի առողջության պահպանման կամ հիվանդությունների
--	--	--	--	--

			անհրաժեշտ բժշկական և ոչ բժշկական բնույթի տվյալներ:»:	կանխարգելման վերաբերյալ անհրաժեշտ բժշկական և ոչ բժշկական բնույթի տվյալներ:»:
3.	ՀՀ կառավարություն	Օրենք	բ) Օրենքը լրացնել նոր 3.1 և 3.2 հոդվածներով. «ՀՈԴՎԱԾ 3.1 Առողջապահության բնագավառում կիրառվող փաստաթղթերը 1. Կլինիկական ուղեցույցն խորհրդատվական բնույթ ունեցող փաստաթուղթ է, որի նպատակն է աջակցել բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ կայացնելուն՝ չսահմանափակելով յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում ուղեցույցով չնախատեսված, ապացուցողական բժշկությամբ հիմնավորված առանձնահատուկ որոշում կայացնելու նրա իրավունքը: 2. Հիվանդի վարման գործելակարգով սահմանված պահանջներից շեղումները կարող են լինել բուժաշխատողի կողմից գրավոր և ապացուցողական բժշկության վրա հիմնված տվյալների առկայության դեպքում: Գրավոր հիմնավորմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից: 3. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը ենթակա է կատարման պետության կողմից երաշխավորված	Առաջարկն ընդունված է մասամբ: 1. Ամրագրվել է 19.2 հոդվածի 3-րդ կետում, որպես բուժաշխատողի իրավունք հետևյալ խմբագրությամբ. Բուժաշխատողներն իրավունք ունեն. «3) Ելնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի իրավիճակից կայացնել ապացուցողական բժշկությամբ հիմնավորված որոշումներ՝ լրացուցիչ միջամտություններ կատարելու համար, որոնք նախատեսված չեն համապատասխան կլինիկական ուղեցույցներով. »: 2. Առաջարկը վերածնակերպվել է և ապացուցողական բժշկությամբ հիմնավորված որոշումների կայացման իրավունքը ամրագրվել է 19.2 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում: 3. Չի ընդունվել, քանի որ հանդիսանում է առանձին կարգավորման առարկա: Տես՝ 2-րդ առաջարկի 16-րդ կետը:

			բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ կնքված պայմանագրի շրջանակներում և դրա չկատարումը հանգեցնում է պայմանագրով և օրենքով նախատեսված պատասխանատվության: 4. Կլինիկական ուղեցույցները, հիվանդի վարման գործելակարգերը, մասնագիտական բնութագրերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից:	4. Ընդունվել է: Ամրագրվել է 19.3 հոդվածի «Բուժաշխատողների պարտականությունների» 9-րդ և 10-րդ կետերում հետևյալ խմբագրությամբ. «Բուժաշխատողները պարտավոր են՝ 9) իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից հաստատված մասնագիտական բնութագրին համապատասխան. 10) կատարել պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով կլինիկական ուղեցույցները: Պացիենտի վարման գործելակարգերը և կլինիկական ուղեցույցները հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:
			5. Գործունեության ընթացակարգի օրինակելի ձևը, ներառյալ ընթացակարգում ներառվող պարտադիր պահանջները հաստատվում են Հայաստանի	5. Ընդունվել է: Ամրագրվել է 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում

			Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից: Գործունեության ընթացակարգի օրինակելի ձևի հիման վրա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը հաստատում է իր գործունեության ընթացակարգը: 6. Այն բժշկական փաստաթղթերի համար, որոնք ունեն վարման կամ լրացման կամ շրջանառության առանձնահատկություններ, Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից կարող են հաստատվել դրանց լրացման և շրջանառության կարգերը: 7. Էլեկտրոնային բժշկական փաստաթղթերը կարող են կիրառվել առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի գործունեության շրջանակներում դրանց վարման կամ լրացման կամ շրջանառումը կարգերին համապատասխան:	հետևյալ խմբագրությամբ. 11) կատարել գործունեության ընթացակարգով սահմանված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում: Գործունեության ընթացակարգի օրինակելի ձևը, ներառյալ ընթացակարգում ներառվող պարտադիր պահանջները հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից. 6. և 7. կետերը չի ընդունվել: Նշված մասերի ամրագրումը սույն օրենքի նախագծում կառաջացնի նոր հոդվածով լրացման անհրաժեշտություն: Հոդված 3.2-ը ներկայացված չէ:
--	--	--	---	---

4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	գ) Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ «5) ավելացնել նոր «թ» կետ՝ հետևյալ խմբագրությամբ. «թ» ապահովել հիվանդի վարման գործելակարգերով, գործունեության ընթացակարգով, իսկ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչներով սահմանված պահանջների կատարման աշխատանքները»: 6) ավելացնել նոր «ժ» կետ՝ հետևյալ խմբագրությամբ. «ժ» Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան հաստատել գործունեության ընթացակարգը»: 7) վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտման համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:	5) Ընդունվել է: Ամրագրվել է 19-րդ հոդվածի «ժ») կետում ժ) ապահովել գործունեության ընթացակարգով, պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջների կատարման աշխատանքները. 6) Ընդունվել է: Ամրագրվել է 19-րդ հոդվածի «ի») կետում. «ի» Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան հաստատել գործունեության ընթացակարգը»: 7) Չի ընդունվել: Քանի որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների և բուժաշխատողների համար պատասխանատվությունը ընդհանուր առմամբ օրենսդրության մեջ չի տարանջատվել՝ օրինակ քրեական օրենսգրքով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ
----	-------------------	---------------------	--	---

				հասկացությունը վերաբերվում է և՛ հաստատություններին և՛ բուժաշխատողներին, ապա նպատակահարմար ենք համարում հարցը կարգավորել ամբողջական՝ բոլոր անհրաժեշտ օրենքներում և առաջարկը ներկայացնել հետագայում՝ առանձին նախագծերի փաթեթով:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 19.3-րդ հոդվածի 1-ին մաս	դ) Օրենքի նախագծի հոդված 5-ով լրացվող օրենքի 19.3 հոդվածի 1-ին 1) մաս 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը.» 2) մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 10-րդ և 11-րդ կետերով. «10) իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնել մասնագիտական բնութագրին համապատասխան, 11) կատարել հիվանդի վարման գործելակարգերով, գործունեության ընթացակարգով, իսկ պետության կողմից	1) Ընդունելով նաև պատգամավոր Հրանտ Բագրատյանի առաջարկությունը՝ 6-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև արձանագրել բժշկական միջամտությունները.» 2) Ընդունվել է: 19.3-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ խմբագրությամբ 9, 10 կետերով. «9) իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված մասնագիտական բնութագրին համապատասխան, 10) կատարել պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով

			երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչներով սահմանված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում»: Առաջարկում ենք նաև հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր մասով. «Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտման համար բուժաշխատողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»:	կլինիկական ուղեցույցները: Պացիենտի վարման գործելակարգերը և կլինիկական ուղեցույցները հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից: Չի ընդունվել: Տես 4-րդ առաջարկի 7-րդ կետը:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով լրացվող 7-րդ մաս	Վերոգրյալ առաջարկություններն ընդունելու դեպքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1 հոդվածի 2-րդ նախադասության մեջ, նախագծի հոդված 1-ի 3-րդ մասով լրացվող 7-րդ մասում:	Առաջարկն ընդունված է մասամբ: Համապատասխան փոփոխություններ կատարվել են նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մասում հետևյալ խմբագրությամբ. «7. Առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն՝ բուժաշխատողի կողմից իր կրթությանը, որակավորմանը և մասնագիտական բնութագրին համապատասխան, իր իրավասության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին, չափորոշիչներին, կլինիկական ուղեցույցներին, պացիենտի վարման գործելակարգերին և իր աշխատանքային

				պարտականություններին համապատասխան աշխատանքների իրականացում:»: Օրենքի 2.1 հոդվածի 2-րդ նախադասության մեջ փոփոխությունը նպատակահարմար է կատարել առանձին նախագծով, քանի որ այն կառաջացնի նոր հոդվածով լրացման անհրաժեշտություն:
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «ՀՕ-42-Ն» բառը փոխարինել «ՀՕ-42» բառով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս, 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի փոփոխությունը կատարել նոր խմբագրությամբ շարադրելով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետին:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով լրացվող 7-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով լրացվող 7-րդ մասում «իրավասությունների» բառը փոխարինել «իրավասության» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «1-ին մասում» բառերը փոխարինել «1-ին մասի» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
11.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին, 3-րդ, 4-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին, 3-րդ, 4-րդ հոդվածների մասերի և կետերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի	Նախագծի 1-ին, 3-րդ, 4-րդ հոդվածների համարակալումը բխում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության

			պահանջներին:	օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներից՝ համաձայն որի. «Իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին)»:
1 2	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Թ. Պողոսյան	Նախագծի 5-րդ հոդված 19.2 հոդվածի 4-րդ կետ	5-րդ հոդվածում 19.2 հոդվածից հանել 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4) օրենքով սահմանված կարգով պաշտպանել իրենց մասնագիտական համբավը»	Առաջարկն ընդունված է: 4-րդ կետը վերաձևակերպվել է. «4) օրենքով սահմանված կարգով պաշտպանել իրենց մասնագիտական համբավը, պատիվը և արժանապատվությունը».
1 3.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Թ. Պողոսյան	Նախագծի 5-րդ հոդված 19.3 հոդված	5-րդ հոդվածի 19.3 հոդվածում լրացնել «9) պաշտպանել մասնագիտական պատիվը և արժանապատվությունը»:	Չի ընդունվել, քանի որ առաջարկված ձևակերպումը դիտարկվում է որպես իրավունք և արդեն իսկ սահմանված է բուժաշխատողների իրավունքների հոդվածում:
1 4	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ռ. Մուրադյան	Նախագծի 5-րդ հոդված 19.1 հոդվածի 1-ին կետ	Հոդված 19.1-ի 1-ին կետի «կամ միջին, կամ կրտսեր բուժաշխատողներ» արտահայտությունը փոխարինել ստորակետներով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
1 5	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ռ. Մուրադյան	Նախագծի 5-րդ հոդված 19.1 հոդվածի 3-րդ կետ	Հոդված 19.1-ի 3-րդ կետից « բարձրագույն» բառը հանել՝ թողնելով «ով ունի միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթություն ու որակավորում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է ՇՄՁ հավաստագիր»:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
16.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ռ. Մուրադյան	Նախագծի 5-րդ հոդվածի 19.1 հոդվածի 4-րդ կետ	Հոդված 19.1-ի 4-րդ կետում «որոշակի գիտելիքներ կամ հմտություններ» արտահայտությունը փոխարինել «որոշակի գիտելիքներ և հմտություններ» արտահայտությամբ:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
17.	ՀՀ ԱԺ	Նախագծի 3-րդ	3-րդ հոդվածում 18-րդ հոդվածի 2-րդ կետի բ.	Առաջարկն ընդունված է: Կատարվել է

	պատգամավոր՝ Կ. ԱՃԵՆՅԱՆ	հոդված 18-րդ հոդվածի 2- րդ կետի բ. ենթակետ	Ենթակետում «օրենքով սահմանված կարգով պաշտպանել իրենց գործարար համբավը» նախադասությունից հանել «գործարար» բառը:	համապատասխան փոփոխություն:
18.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Կ. ԱՃԵՆՅԱՆ Մ. Մինասյան Ա. Բաբլոյան	Նախագծի 5-րդ հոդվածի 19.5 հոդվածի 9- րդ մաս	Հավաստագրման գործընթացի առավել համակարգված իրականացումը ապահովելու նպատակով առաջարկվում է հանձնաժողովի փոխարեն ստեղծել մասնագիտական գործունեության հավաստագրման ազգային կենտրոն, որը իր կազմում կներառի մասնագիտական հանձնաժողովներ: Նման առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հավաստագրման գործընթացը իր մեջ ներառում է մի շարք գործառնություններ, որոնց պատշաճ իրականացման համար առավել նպատակահարմար է առանձին կենտրոնի ստեղծումը: Վերը նշված կարևոր գործառնություններից են՝ բուժաշխատողների գրանցումը, ավագ և միջին բուժաշխատողների վերաբերյալ շտեմարանի վարումը, առաջին անգամ մասնագիտական գործունեությունը սկսող բուժաշխատողներին հավաստագրերի տրամադրումը, ՇՄՋ կրեդիտների հիման վրա բուժաշխատողներին հավաստագրերի տրամադրումը: 1. 5-րդ հոդվածում 19.5-րդ հոդվածի 9-րդ մասը համարակալել 11-րդ մաս և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11. Հավաստագրման կազմակերպման և իրականացման կարգը, հավաստագրերի և վերապահումով հավաստագրի ձևերը և տրամադրման կարգը, շտեմարանի ձևավորման և վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:

20.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Կ. Աճեմյան Մ. Մինասյան Ա. Բաբլոյան	Նախագծի 5-րդ հոդվածի 19.5 հոդվածի 10- րդ մաս	2. 19.5-րդ հոդվածի 10-րդ մասը համարակալել 9- րդ մաս և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9. Հավաստագրումը իրականացնում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ստեղծված մասնագիտական գործունեության հավաստագրման ազգային կենտրոնը (ՄԳՀԱԿ): Այդ նպատակով ՄԳՀԱԿ-ում լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով ստեղծվում են մասնագիտական հանձնաժողովներ՝ որոնց կազմում ընդգրկվում են բժշկական մասնագիտական հասարակական միավորումների, բժշկական ուսումնական հաստատությունների, բժշկական կազմակերպությունների և առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներ: Մասնագիտական հանձնաժողովների անհատական կազմը սահմանում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:»:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
21.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Կ. Աճեմյան Մ. Մինասյան Ա. Բաբլոյան	Նախագծի 5-րդ հոդվածի 19.5 հոդված	3. 19.5-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով՝ հետևյալ խմբագրությամբ. «10. ՄԳՀԱԿ-ը ՇՄՋ հավաստագրումը կազմակերպելու համար իրականացնում է՝ 1) օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեություն իրականացնող բուժաշխատողների գրանցումը 2) առաջին անգամ մասնագիտական գործունեությունը սկսող բուժաշխատողների գրանցումը և հավաստագրի տրամադրումը. 3) ՇՄՋ կրեդիտների հիման վրա սահմանված կարգով ՇՄՋ հավաստագրերի տրամադրումը. 4) ավագ և միջին բուժաշխատողների վերաբերյալ շտեմարանի վարումը, որտեղ առնվազն ներառվում են բուժաշխատողների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության,	Առաջարկն ընդունված է: 19.5-րդ հոդվածը լրացվել է նոր 10-րդ մասով:

			որակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության և ՇՄԶ հավաստագրերի վերաբերյալ տեղեկատվություն:»:	
22.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Կ. Աճեմյան Մ. Մինասյան Ա. Բաբլոյան	Նախագծի 5-րդ հոդվածի 19.5 հոդված	4. 19.5-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերը հանել: Առաջարկը պայմանավորված է նրանով, որ 11-րդ և 12-րդ մասերում ամրագրված շտեմարանի վարումը և նրանում ներառվող տեղեկատվությունը առաջարկվել է ամրագրել է 19.5 հոդվածի 10-րդ մասում:	Առաջարկն ընդունված է: Նախագծի 19.5-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերը հանվել է:
23.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Մ. Շահգեղյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավաստագիրը տրամադրվում է 5 տարում կուտակած կրեդիտների հիման վրա՝ առաջարկվում է 6-րդ հոդվածի 1-ին մասում «2019» թիվը փոխարինել «2021» թվով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
24.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Մ. Շահգեղյան	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մաս	Շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման և հավաստագրման անցումային փուլը կանոնակարգելու համար առաջարկում են 6-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման և հավաստագրման 5 տարվա ժամանակացույց»:	Առաջարկն ընդունված է: 6-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է համապատասխան առաջարկի:
25.	ՀՀ ԱԺ	Նախագծի 6-րդ	Բուժաշխատողների շարունակական	Առաջարկն ընդունված է:

	պատգամավորներ՝ Վ. Բաղդասարյան Ա. Մինասյան Ա. Բաբլոյան	հոդված	մասնագիտական զարգացման հավաստագրման համակարգին սահուն անցնելու նպատակով առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ խմբագրությամբ. «3. 2012 թվականից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընկած ժամանակահատվածը շարունակական մասնագիտական զարգացման սույն օրենքի 19.4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեսակներին մասնակցած բուժաշխատողներին կարող են շնորհվել կրեդիտներ՝ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:»:	6-րդ հոդվածը լրացվել է 3-րդ մասով:
26.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Հ. Բազրատյան	Նախագծի 4-րդ հոդվածում 19-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետ	1. 19-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետում լրացնել նոր «ը» կետ հետևյալ խմբագրությամբ. «ը» ունենալ պաշտոնական ինտերնետային կայք, որը առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, գնացուցակի, բուժանձնակազմի վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն մասնագիտական ծառայություններ մատուցողների հետ:»:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան լրացում:
			2. Առաջին առաջարկի հետ պայմանավորված նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետում «ը» կետը փոխարինել «թ» կետով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան լրացում:
27.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Հ. Բազրատյան	Նախագծի 5-րդ հոդվածում 19.1-րդ հոդվածի 8-րդ մաս	Սպառողը ծառայություն ստանալիս պետք է համոզված լինի որ իրեն բժշկական ծառայություն մատուցող անձը ունի ինքնուրույն բժշկական գործունեության իրավունք, որն էլ ապացուցվում է	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան լրացում:

			հավաստագրով: Այդ նպատակով առաջարկում են 1. 19.1 հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերությունում «ավարտական փաստաթղթերի հիման վրա» բառերից հետո լրացնել «սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունքը գրանցելու և հավաստագիր ստանալու դեպքում» բառերը: 2. Համապատասխան փոփոխություն կատարել 19.1 հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերությունում: 19.1 հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերությունը համարակալել որպես 9-րդ մաս և «Սույն մասի համաձայն՝ ավարտական փաստաթղթի հիման վրա» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ մասնագիտական գործունեության հավաստագրի հիման վրա» բառերով:	
28.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Հ. Բազրատյան	Նախագծի 5-րդ հոդվածում 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	19.3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6) օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրել բժշկական միջամտությունները և վարել բժշկական փաստաթղթերը.»:	Առաջարկն ընդունված է: Ընդունելով նաև կառավարության առաջարկությունը՝ 6-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև արձանագրել բժշկական միջամտությունները.»
29.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդվածի 9-րդ մաս	1-ին հոդվածի 9-րդ մասում «գործունեություն իրականացնելու թույլտվություն» բառերը փոխարինել «գործունեությունը շարունակելու	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Այլ առաջարկների ընդունմամբ

			թույլտվություն» բառերով, քանի որ շարունակական մասնագիտական զարգացումը իրականացվում է գործունեությունը շարունակելու թույլտվություն (հավաստագիր) ստանալու համար:	պայմանավորված 9-րդ մասը համարակալվել է որպես 13-րդ մաս:
30.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 4-րդ հոդվածում 4-րդ կետի ը) ենթակետ	4-րդ հոդվածում 4-րդ կետի ը) ենթակետում «վերապահումով տրված հավաստագիր» արտահայտությունից հանել «տրված» բառը:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Այլ առաջարկների ընդունմամբ պայմանավորված ը) ենթակետը խմբագրվել է որպես թ) ենթակետ:
31.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 5-րդ հոդվածում 19.1 հոդվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ մասեր	5-րդ հոդվածում 19.1 հոդվածի 2-րդ, 3-րդ մասերում «ստացել է ՇՄԶ հավաստագիր» արտահայտությունը փոխարինել «ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄԶ հավաստագրեր» արտահայտությամբ, 7-րդ մասում «ՇՄԶ հավաստագրի առկայության դեպքում» արտահայտությունը փոխարինել «մասնագիտական գործունեության և ՇՄԶ հավաստագրերի առկայության դեպքում» արտահայտությամբ, քանի որ բացի ՇՄԶ հավաստագրից բուժաշխատողը ի սկզբանե՝ առաջին անգամ գործունեություն իրականացնելու համար, պետք է ունենա նաև մասնագիտական գործունեության հավաստագիր:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
32.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	5-րդ հոդվածում 19.1 հոդվածի 5-րդ մաս	5-րդ հոդվածում 19.1 հոդվածի 5-րդ մասում «ինչպես նաև բժշկական նեղ մասնագիտությունների ցանկերը» արտահայտությունից հանել «բժշկական» բառը, քանի որ ցանկերը վերաբերվում են բժշկական և ոչ բժշկական մասնագիտություններին, որոնք կիրառվում են առողջապահության բնագավառում:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:

33.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	5-րդ հոդվածում 19.1 հոդվածի 8-րդ մաս	5-րդ հոդվածում 19.1 հոդվածի 8-րդ մասի երրորդ պարբերությունում «ստաժը լրացնելու պայմանով վերապահումով տրված հավաստագրի» արտահայտությունը փոխարինել «ստաժը լրացնելու պայմանով տրված վերապահումով հավաստագրի» արտահայտությամբ:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Այլ առաջարկի հիման վրա 8-րդ մասի երրորդ պարբերությունը տարանջատվել է 8-րդ մասից և ամրագրվել է նոր 9-րդ մասում:
34.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	5-րդ հոդվածում 19.5 հոդվածի 4-րդ և 7-րդ մասեր	5-րդ հոդվածում 19.5 հոդվածի 4-րդ և 7-րդ մասերում «հավաստագրի» բառից առաջ ավելացնել «ՇՄՋ» հապավումը:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան լրացում:
35.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	5-րդ հոդվածում 19.5 հոդվածի 4-րդ և 8-րդ մասեր	5-րդ հոդվածում 19.5 հոդվածի 4-րդ և 8-րդ մասերում «վերապահումով տրվող հավաստագրի» արտահայտությունից հանել «տրվող» բառը, 5-րդ և 6-րդ մասերում «հավաստագիրը տրվում է վերապահումով» արտահայտությունը փոխարինել «տրվում է վերապահումով հավաստագիր» արտահայտությամբ:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նկատի ունենալով, որ օրենսգրքում արդեն իսկ առկա է 47.8 հոդված, լրացվող հոդվածի համարակալումը փոխել՝ հոդվածի համարը սահմանելով 47.9	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածներով. «Հոդված ...Օրենսգրքի 47.1 հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով. Բժշկական փաստաթղթեր չվարելը Բժշկական փաստաթղթեր չվարելը առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից հարյուրապատիկի չափով, պաշտոնատար	Առաջարկը չի ընդունվել: Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը ուղղված է շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրման ու զարգացման համար և հետևաբար սույն նախագծով պատասխանատվություն

			անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, Բժշկական փաստաթղթերի լրացման կամ շրջանառության պահանջները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում Ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից յոթանասունապատիկի չափով, Հիվանդի վարման գործելակարգի կամ գործունեության ընթացակարգով կամ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչով սահմանված պահանջները չապահովելը կամ ոչ պատշաճ ապահովելը պաշտոնատար անձանց նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, Հիվանդի վարման գործելակարգով կամ գործունեության ընթացակարգով կամ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչով սահմանված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը Ֆիզիկական անձանց նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեության ընթացակարգ չհաստատելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված	նախատեսված է միայն շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր չունեցող անձին աշխատանքային պարտականություններ իրականացնել թույլատրելու և վերապահումով հավաստագիր ունեցող անձին ինքնուրույն մասնագիտական աշխատանքային պարտականություններ իրականացնել թույլատրելու համար: Բացի այդ ներկայացված առաջարկը ընդունելու դեպքում անհրաժեշտ կլինեն նախագիծը լրացնել նոր հոդվածով:
--	--	--	---	--

			նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից հարյուրապատիկի չափով: Սույն հոդվածով նախատեսված արարքները կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:	
3.	ՀՀ Աժ պատգամավոր՝ Մ. Շահգելյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում «2019» թիվը փոխարինել «2021» թվով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
4.	ՀՀ Աժ պատգամավոր՝ Կ. Նահապետյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:»:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան լրացում:
5.	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածում «47.8» թիվը փոխարինել «47.9» թվով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
6.	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածի վերնագրում և հոդվածի տեքստում «վերապահումով տրված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր» արտահայտությունից հանել «տրված շարունակական մասնագիտական զարգացման» բառերը:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
7.	ՀՀ Աժ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածում հոդվածի վերնագիրը գրել փոքրատառերով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:

8.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	2-րդ հոդվածում «47.7» թիվը փոխարինել «47.8» թվով, «,47.8» թիվը «,47.9» թվով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով առաջարկում ենք՝ նախագծի 1-ին հոդվածում «ՀՕ-186-Ն» բառը փոխարինել «ՀՕ-186» բառով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածում «2019 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո» բառերով:	Առաջարկն ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: